**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՓՈՓՈԽՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2001 թվականի դեկտեմբերի 28-ի

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 12. Ռազմական հակահետախուզական գործունեությունը**

Ռազմական հակահետախուզական գործունեությունը լիազորված մարմնի ռազմական հակահետախուզական մարմնի (ծառայությունների, բաժինների, բաժանմունքների) կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, ~~Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերում,~~ այլ զորքերում և զինվորական կազմավորումներում, ինչպես նաև դրանց կառավարման մարմիններում՝ հանցագործությունները բացահայտելու, կանխելու և խափանելու, օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ներթափանցումից պաշտպանելու, ինչպես նաև մարտունակությունը և մարտական պատրաստությունը պահպանելիս հրամանատարությանն աջակցելու նպատակով:

***(12-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-8-Ն, 23.03.18 ՀՕ-268-Ն, 09.06.22 ՀՕ-156-Ն)***

***(09.06.22 ՀՕ-156-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

**ԵՂԵԿԱՆՔ**